

եւ կը յաւելու՝ թէ «գլուծումն ի խոտոց
առնէր» (Խսր. քառ.): Ժ դարուն Մովսէս
անուն ճգնաւորը նոյնպէս «քառաւուն աւ-
ռորքք ձգտեցուցանէր զանսուաղութիւնն»
(Ասող. 178): Ասոնք արդարեւ եզական
ղէպքեր են պատմութեան մէջ, եւ ցոյց
կու տան մարմնոյ եւ կամաց անսովոր ու
զարմանալի ոյժ մը, եթէ սակայն պատ-
մուածն ստոյգ է, եւ ոչ բարեպաշտիկ
համբաւ մը:

Գ. Պահոց ճաշին միւս հանգամանքներն
ալ համեմատական էին կերակրոց տե-
սակին: Եթէ սովորական հացերուն կ'ըն-
կերէին կենաց բոլոր հաճոյականը ու փափ-
կութիւնը, ընդ հակառակն պահոց շրջա-
նին հաւատացեալը կը հրաժարէին այդ
բոլորէն. որով կ'անցնէին «առանց յռա-
ւարոյ եւ օծանկոյ» (Մանդ. 36), ինչպէս
կ'ընէին Հրեայք ալ (Մտթ. 9, 16-17):
Կը հրաժարէին նաեւ զգեստուց պերճան-
քէն, մերկութեան ու ցրտոյն պէտքը վը-
ճարելով «խարազն ինչ հանդերձիւք»
(Մանդ. 36). այս ինքն հակառակը սո-
վորական ժամանակի ճաշերուն (աստ,
146-52): Գրգանք ու շքեղութիւնք ան-
հաշտ էին տխրութեան ու դատարկ ստա-
մոքսի հետ: Ուստի բնականապէս հրաւերք
ու կոչումք ալ կը դադրէին այդ ժամա-
նակ: